



ՅՈՒՆԻԲԱՆԿ

ԲԱՆԿ ԵՎ ԱՎԵԼԻՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
2-րդ եռամսյակի

Միջանկյալ հաշվետվություն

ՀՀ, 0025, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5

հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am








Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Եռամսյակի Հաշվետվություն թիվ 2, 30.06.2026թ.

Երևան 2026

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Մեսրոպ Հակոբյան	Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն		03.08.26թ
Արարատ Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ		03.08.26թ
Գուրգեն Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրածախ բիզնեսի և վաճառքների գծով տնօրեն		03.08.26թ
Օվսաննա Առաքելյան	Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և Ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն		03.08.26թ
Գոհար Գրիգորյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ		03.08.26թ
Վաղինակ Ստեփանյան	Վարչության նախագահի տեղակալ նախագծերի և ստանդարտների ներդրման գծով		03.08.26թ
Դավիթ Պետրոսյան	Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն		03.08.26թ
Արթուր Ապերյան	Վարչության անդամ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն		
Սերգեյ Քոչարյան	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն		03.08.26թ

Հավաստիացնում են, որ Միջանկյալ հաշվետվությունը ստորագրված է վերոհիշյալ անձանց կողմից

Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն



Մեսրոպ Հակոբյան



Յունիբանկ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնես արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաշվետու Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Բացարձակ արժեքով ներկայացված ցուցանիշներն արտահայտված են հազ. ՀՀ դրամով:

Ցուցանիշի անվանումը	2023թ. (աուդիտ անցած)	2024թ. (աուդիտ անցած)	2025թ (աուդիտ անցած)	2026թ 2-րդ եռամսյակ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,454,198	8,227,910	9,816,551	4,481,696
Սեփական կապիտալի միջին մեծություն	38,699,338	43,760,553	51,694,264	45,339,208
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	11.5%	18.8%	18.99%	9.88%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,454,198	8,227,910	9,816,551	4,481,696
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	304,828,380	313,040,486	393,782,348	418,927,435
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.5%	2.6%	2.49%	1.07%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,454,198	8,227,910	9,816,551	4,481,696
Գործառնական եկամուտ	28,256,358	28,394,682	31,367,160	15,239,288
Զուտ շահույթի մարժա (NPM), %	15.8%	29.0%	31.30%	29.41%
Գործառնական եկամուտ	28,256,358	28,394,682	31,367,160	15,239,288
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	304,828,380	313,040,486	393,782,348	418,927,435
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	9.3%	9.1%	7.97%	3.64%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	304,828,380	313,040,486	393,782,348	418,927,435
Սեփական կապիտալի միջին մեծություն	38,699,338	43,760,553	51,694,264	45,339,208
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	7.88	7.15	7.62	9.24
Զուտ տոկոսային եկամուտ	15,943,054	18,293,874	24,031,541	10,229,881
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	203,773,614	227,473,592	301,357,109	333,685,779
Զուտ տոկոսային մարժա (NIM)	7.8%	8.0%	7.97%	3.07%
Տոկոսային եկամուտ	25,245,475	30,045,102	35,183,315	19,339,505
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	203,773,614	227,473,592	301,357,109	333,685,779
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	12.4%	13.2%	11.67%	5.8%



Տոկոսային ծախսեր	9,302,421	11,751,228	11,151,774	9,109,624
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	255,300,750	259,444,789	328,357,046	357,374,151
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	3.6%	4.5%	3.4%	2.55%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,454,198	8,227,910	9,816,551	4,481,696
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	213,021,965	218,042,733	231,888,887	231,888,887
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	20.91	37.74	42.33	19.33
Սպրեդ	8.7%	8.7%	8.3%	3.25%

Բանկի ընդհանուր ակտիվները 30.06.2026թ. դրությամբ կազմել են 418.93 մլրդ ՀՀ դրամ, որից վարկային պորտֆելը կազմել է 283.79 մլրդ ՀՀ դրամ, իսկ արժեթղթերի պորտֆելը՝ 18.8 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 373.59 մլրդ ՀՀ դրամով: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները կազմել են 296.69 մլրդ ՀՀ դրամ:

Ժամկետային ավանդները 2026թ. առաջին կիսամյակում ավելացել են 13.5 մլրդ ՀՀ դրամով և կազմել 154.65 մլրդ ՀՀ դրամ: Ցպահանջ ավանդները 2026թ. առաջին կիսամյակի ընթացքում ավելացել են մոտ 12.07 մլրդ ՀՀ դրամով և կազմել 142.04 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի պասիվները 30.06.2026թ. դրությամբ կազմել են 418.93 մլրդ ՀՀ դրամ, որի 10.8%-ը կամ 45.34 մլրդ ՀՀ դրամը կազմում է ընդհանուր կապիտալը, իսկ 89.2%-ը կամ 373.59 մլրդ ՀՀ դրամը՝ ընդամենը պարտավորությունները: Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 23.43 մլրդ ՀՀ դրամ, գլխավոր պահուստը՝ 1.81 մլրդ ՀՀ դրամ, վերագնահատման պահուստները՝ 1.44 մլրդ ՀՀ դրամ և չբաշխված շահույթը՝ 4.49 մլրդ ՀՀ դրամ: Պարտավորությունների կառուցվածքում խոշորագույն հոդված են հանդիսանում հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, որոնք կազմել են ընդամենը պարտավորությունների 79.42%-ը կամ 296.69 մլրդ ՀՀ դրամ:

2026 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 4.48 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերակցությունը կապիտալի միջին մեծությանը)՝ 9.9%:

Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը 2026 թվականի հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 8%: Այս մասին հայտնում է ՀՀ վիճակագրական կոմիտեն: 2026 հունիսի դրությամբ 12-ամսյա գնաճը կազմել է 5.1%:

Մանրածախ բիզնես

Մանրածախ բիզնեսում Բանկի աշխատանքն ուղղված էր գործիքակազմի կատարելագործմանը, բիզնես գործընթացների օպտիմալացմանը, հաճախորդների հետ հետադարձ կապի ուժեղացման միջոցով սպասարկման որակի բարձրացմանը:

Վարկավորման տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ կենտրոնական բանկի քաղաքականության շրջանակներում Բանկն առաջարկել է հաճախորդներին առավել գրավիչ պայմաններ: Կայուն աճ արձանագրվել է ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման համար սպառողական վարկերի, ոսկու գրավով վարկերի գծով:



Բանկը շարունակել է ֆինանսավորման արժեքի նվազեցման քաղաքականությունը՝ ժամկետային ավանդների համար սահմանելով չափավոր տոկոսադրույքներ:

Կորպորատիվ բիզնես

Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններից մեկը փոքր և միջին բիզնեսին աջակցելն է: Կորպորատիվ բիզնեսի հիմնական խնդիրն էր կենտրոնանալ բիզնեսի առավել ցածր ռիսկային հատվածների վարկավորման վրա՝ մեծացնելով վարկային պորտֆելի ծավալը և շուկայում Բանկի մասնաբաժինը, շեշտը դնելով բարեխիղճ վարկառուների հետ հարաբերությունների զարգացման և նրանց համապարփակ սպասարկման վրա:

Նիշային ուղղություններն էին փոքր արդյունաբերությունը, առևտուրը, գյուղատնտեսությունը, շինարարությունը և ծառայությունների մատուցման ոլորտը: Բանկը շարունակել է ներգրավել և վարկավորել շինարարության ոլորտը՝ պայմանավորված բնակելի շենքերի և կոմերցիոն տարածքների շինարարության տեմպերի նկատելի աճով:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը որպես լիզինգային շուկայի ակտիվ մասնակից, միացել է «Հայաստանի լիզինգատուների ասոցիացիային», ինչը լայն հնարավորություններ է ստեղծում ոլորտի բարեփոխումներին մասնակցելու և հետագա զարգացմանն աջակցելու համար:

Սպասարկման ցանց, հաճախորդային բազա

Այսօր Յունիբանկն ունի վերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 48 մասնաճյուղ, որից 30 մասնաճյուղ Երևանում, 18 մասնաճյուղ Հայաստանի այլ շրջաններում, մեկը՝ Ղազախստանի Հանրապետությունում: Բանկը դեռևս 2022 թվականից սկսեց վերափոխել իր մասնաճյուղերը՝ նպատակ ունենալով նորարարական միջավայրում հետաքրքիր տեխնոլոգիական լուծումների միջոցով հաճախորդներին բարձրակարգ ծառայություններ մատուցել և դրանով իսկ հաճախորդների համար առավել հաճելի դարձնել Բանկի այցելությունը:

30.06.2026թ. դրությամբ Յունիբանկն ունի ավելի քան 330,000 ակտիվ հաճախորդ:

Դրամական փոխանցումների սպասարկման ոլորտում շարունակվում է նկատվել ծավալների չնչին փոփոխություն, ինչը պայմանավորված է բանկի միջոցով ստացվող ֆիզիկական անձանց միջազգային ոչ առևտրային փոխանցումների համանման ծավալներով:

Բանկի ռազմավարական առաջնահերթությունները

Յունիբանկի կողմից հաստատված ռազմավարության շրջանակներում սահմանվել են զարգացման հետևյալ առանցքային առաջնահերթությունները՝

- Տեխնոլոգիական կատարելագործում, թվային հարթակի վաճառքի զարգացում,
- Վարկավորման բնագավառում արհեստական բանականության տեխնոլոգիաների հետագա զարգացում,
- Հաճախորդահեն մոտեցման զարգացում և հաճախորդների պահանջմունքների խորը վերլուծության հիման վրա՝ սպասարկման և գործիքակազմի ձևավորում նաև նրանց կոնտրագենտների համար
- Յունիբանկի ֆինանսական արդյունավետության և դիրքերի բարելավման ապահովում բանկային համակարգում, Բանկի ներդրումային գրավչության բարձրացում:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած

կարևոր դեպքերի նկարագիրը

Այսօր Յունիբանկը ունի վերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան



Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը:

Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 24,925,447,290 (քսանչորս միլիարդ ինը հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 191,254,472 (մեկ հարյուր իննսունմեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր յոթանասուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 32,010,000 (երեսուներկու միլիոն տասը հազար) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 4,778,261 (չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 230 (երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով, 3,846,154 (երեք միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր հիսունչորս) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 390 (երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:

2026 թվականի մարտին Յունիբանկը միջազգային հեղինակավոր MFR գործակալության կողմից արժանացել է «Հաճախորդների պաշտպանության հավաստագրման» (Customer Protection Certification) արժաթե մակարդակի: Այս հավաստագրումը վկայում է, որ բանկը լիովին համապատասխանում է հաճախորդների պաշտպանության ոլորտում սահմանված հիմնական միջազգային չափանիշներին և ցուցաբերում է կայուն առաջընթաց՝ առավել առաջադեմ պրակտիկաների ներդրման ուղղությամբ:

2026 թվականի ապրիլին Յունիբանկը միացել է Ածխածնի արտանետումների հաշվառման ֆինանսական համագործակցությանը (Partnership for Carbon Accounting Financials, PCAF)՝ շրջակա միջավայրի վրա իր ֆինանսական գործունեության ազդեցությունը գնահատելու և այն ավելի թափանցիկ դարձնելու համար: PCAF-ը ֆինանսական հաստատությունների համաշխարհային համագործակցություն է, որը նպաստում է վարկերի և ներդրումների արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման միասնական մոտեցումների ներդրմանը: Միանալով համագործակցությանը՝ Յունիբանկը մտադիր է կիրառել միջազգային ճանաչում ունեցող մեթոդաբանություն՝ իր գործունեության հետ կապված արտանետումների չափման և բացահայտման համար:

2026թ հուլիսին Moody's Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Յունիբանկի երկարաժամկետ ավանդների վարկանիշը B1 մակարդակում, ինչպես նաև Բանկի b2 Baseline Credit Assessment (BCA) և Adjusted BCA գնահատականները: Միաժամանակ գործակալությունը Յունիբանկի երկարաժամկետ ավանդների վարկանիշի հեռանկարը «Կայուն»-ից բարձրացրել է «Դրական»: Վարկանիշի «Դրական» հեռանկարն արտացոլում է Հայաստանում գործառնական միջավայրի բարելավումը, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ Բանկի BCA գնահատականի և վարկանիշների վրա: Յունիբանկի b2 BCA և Adjusted BCA գնահատականների վերահաստատումը պայմանավորված է Բանկի ակտիվների բարձր որակով, կայուն շահութաբերությամբ և ֆինանսավորման առավել անկայուն աղբյուրներից սահմանափակ կախվածությամբ:

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող իննովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը,



ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
- հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

ՄԵՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչություն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հավատարիմ մնալով կայուն զարգացման իր որդեգրած քաղաքականությանը՝ Բանկը շարունակում է ռազմավարական համագործակցությունը «Agents For Impact» (AFI) կազմակերպության հետ: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը հաջողությամբ իրականացրել է AFI-ի կողմից կազմակերպված չորս վերապատրաստման դասընթաց՝ ուղղված տարբեր գործառնական ոլորտներին: Այս դասընթացների նպատակն էր համակարգված կերպով ներառել ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարչական) բաղադրիչները Բանկի հիմնական գործընթացներում և կորպորատիվ մշակույթում:

Բացի այդ, **հուլիսին Բանկը ձեռնամուխ է եղել պաշտոնական ESG վարկանիշի գնահատման գործընթացին:** Այն ներկայումս ընթացքի մեջ է, և նախատեսվում է, որ կավարտվի վերջնական



փաստաթղթերի ներկայացմամբ ու համապատասխան հավաստագրի ստացմամբ մինչև երկրորդ եռամսյակի վերջ:

Այս անցումն առավել ամրապնդելու նպատակով՝ Բանկը ձեռնամուխ է եղել **Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ESMS)** քաղաքականության ներդրմանը: Թեև քաղաքականությունն այժմ գտնվում է ներքին վերանայման և հաստատման փուլում, դրա կիրարկումն արդեն իսկ ապահովում է առավել թիրախային մոտեցում և ստանդարտացում մեր պորտֆելում ESG-ի հետ կապված ռիսկերի և հնարավորությունների կառավարման հարցում:

Հաճախորդների շահերի պաշտպանություն և հավաստագրում

Բանկը շարունակում է հետևողական մնալ էթիկական վարքագծի և թափանցիկության ամենաբարձր չափանիշների պահպանմանը: **2025 թվականի հունիսին** Բանկը պաշտոնական համաձայնագիր է ստորագրել միջազգային հավաստագրող հեղինակավոր «**MFR**» կազմակերպության հետ (Իտալիա, Միլան)՝ **Հաճախորդների պաշտպանության հավաստագիր (Client Protection Certification)** ստանալու նպատակով:

Ներքին քաղաքականության և գործառնությունների մանրակրկիտ աուդիտի արդյունքում՝ **2026 թվականի մարտին** Բանկին պաշտոնապես շնորհվել է հիշյալ հավաստագիրը: Այս ձեռքբերումը հանդիսանում է անկախ վկայություն այն մասին, որ Բանկի գործելաոճը լիովին համապատասխանում է հաճախորդների շահերի պաշտպանության միջազգային բոլոր ստանդարտներին և փաստում է մեր առաջընթացը լավագույն փորձի կիրառման ճանապարհին:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Յունիբանկում ռիսկերի կառավարման համակարգն առաջնորդվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ օրենքներով և նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով / Generally Accepted Risk Principles – GARP/, ինչպես նաև հնարավոր է օգտագործվեն Բանկի կողմից ընդունված գնահատման և վերլուծության համար սեփական մեթոդներ, ցուցանիշներ և կառավարման գործիքներ: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար: Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:



Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում:

Վարկային ռիսկ է համարվում վարկառուի կողմից ստանձնած վարկային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ սահմանելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր:

Շուկայական ռիսկ է համարվում շուկայական գործոնների (արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Իրացվելիության ռիսկ է համարվում Բանկի կողմից իր պարտատերերի օրինական պահանջները ճիշտ ժամանակին չբավարարման խնդիրների ի հայտ գալու և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Կապիտալի համարժեքության ռիսկ է համարվում ռիսկով կշռված ակտիվների և/կամ ընդհանուր կապիտալի տարրերի փոփոխման պարագայում Բանկի կապիտալի անբավարարության (ոչ համարժեքության) հավանականությունը:

Գործառնական ռիսկ է համարվում Բանկի ներքին կազմակերպչական և/կամ բիզնես գործընթացների խափանման (անձնակազմի ոչ համարժեք կամ ոչ կանոնակարգային գործողություններ, դիտավորությամբ կատարված կամ ոչ միտումնավոր գործարքային սխալներ, գործառնական համակարգերի կամ տեխնոլոգիական բնույթի այլ խափանումներ) կամ տեխնածին բնույթի արտաքին գործոնների ազդեցության արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Իրավական ռիսկ է համարվում Բանկի ներքին իրավական ակտերի, կիրառվող բիզնես գործընթացների, գործիքների, գործարքների, ինչպես նաև վերջիններս կարգավորող պայմանագրերի գործող օրենսդրությանը չհամապատասխանելու և դրա արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Համբավի (հեղինակության) ռիսկ է համարվում հանրության բացասական կարծիքի հետևանքով Բանկի կողմից իր գործող կամ պոտենցիալ հաճախորդներին, գործընկերներին կորցնելու կամ վերջիններիս հետ իրականացվող գործարքների/գործառնությունների ծավալի նվազման հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի համար ֆինանսական կորուստների և/կամ իրացվելիության խնդիրների:

Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ է համարվում Բանկի կողմից ոչ իրատեսական (անհամապատասխան) ռազմավարության ընտրության, ինչպես նաև ընտրված ռազմավարության հիմքում ընկած ենթադրությունների, ցուցանիշների, նպատակների և/կամ այլ գործոնների բացասական փոփոխությունների ի հայտ գալու հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական կորուստների:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգի բաղադրիչներն են՝

Ռազմավարությունը,

Մեթոդաբանությունը,

Վերահսկողությունը,

Արդյունավետության գնահատումը,

Արդիականացումը (անհրաժեշտության դեպքում):



Բանկային ռիսկերի կառավարում է համարվում Բանկի իրավասու մարմինների, ստորաբաժանումների կամ անձանց կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որը հնարավորություն կընձեռի բանկային ռիսկերի առկայության և անորոշության պայմաններում ապահովել դրական ֆինանսական արդյունք:

ՌԿՀ-ն գործում է անընդհատության սկզբունքով՝ հաշվի առնելով ներքին և արտաքին միջավայրերի դինամիկ փոփոխությունները:

Բանկային ռիսկերի կառավարումն իրականացվում է ուղղահայաց եռաստիճան համակարգով՝

Ռազմավարական մակարդակ՝ ռիսկերի բացահայտում, ընդունելի ախորժակի, գործընթացների և սահմանաչափերի սահմանում,

Վերահսկողական/հսկողական մակարդակ՝ մոնիտորինգ, շեղումների վերլուծություն, գնահատում և համապատասխանեցում,

Մարտավարական մակարդակ՝ ռիսկերի ընթացիկ կառավարում թույլատրելի սահմանաչափերի միջակայքում (ռիսկ պարունակող գործարքների իրականացում):

Բանկային ռիսկերի կառավարման գործընթացի փուլերն են՝

Ռիսկերի բացահայտումը (սահմանումը), ներառյալ ռիսկի գործոնների վերլուծությունը (տարանջատումը),

Ռիսկերի գնահատման մեթոդների սահմանումը (ըստ տեսակների) և ռիսկերի գնահատումը (կանխատեսումը),

Ռիսկերի սահմանափակումը, այն է՝ դիվերսիֆիկացիայի սկզբունքների, ներքին սահմանաչափերի հաստատումը, ինչպես նաև համապատասխան ներքին իրավական ակտերի մշակումը և ընդունումը, որոնցում, մասնավորապես, ներառվում են բազմակի ստուգման, միևնույն գործընթացի իրականացումը տարբեր, միմյանց հետ չփոխկապակցված անձանց վրա դնելու և սխալների բացահայտման սկզբունքները:

Ռիսկերի գործնական կառավարումը, այն է՝ համապատասխան գործողությունների իրականացումը, իրավիճակային արձագանքումը (խուսափում, նվազեցում/հեջավորում, փոխանցում/ապահովագրություն, ռիսկի ընդունում և այլն),

Ռիսկերի մոնիտորինգը, վերլուծությունը, ընթացիկ (օպերատիվ) և պարբերական հաշվետվությունների/տեղեկատվության տրամադրումը ուղղահայաց և հորիզոնական կտրվածքներով,

Ռիսկերի կառավարման հետգործարքային վերահսկողությունը:

Յուրաքանչյուր ռիսկի տեսակի կառավարման գործընթացը (սահմանաչափերը, կառավարումը, վերահսկողությունը, հաշվետվությունները, պատասխանատվությունները և այլն) կարգավորվում է համապատասխան կարգերով, ընթացակարգերով:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վիճակի մասին
« 30 » ՀՈՒՆԻՍ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջանի վերջի դրությամբ 30.06.2026	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ 31.12.2025 (ստուգված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	15	35,065,258	43,107,570
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	44,521,411	32,126,203
Ներդրումային արժեթղթեր	18	18,801,927	15,386,328
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	18	7,623,567	9,280,499
Հաճախորդներին տրված վարկեր	19	283,796,048	264,557,191
Հիմնական միջոցներ	20	14,911,365	14,924,513
Ոչ նյութական ակտիվներ	21	4,443,443	3,730,630
Հետաձգված հարկային ակտիվներ	23	335,248	485,177
Կանխավճար շահութահարկի գծով	23	1,100,153	1,035,590
Բռնագանձված ակտիվներ	22	1,508,717	1,592,107
Այլ ակտիվներ	23	6,820,298	7,556,540
Ընդամենը՝ ակտիվներ		418,927,435	393,782,348
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	18,738,241	15,795,557
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	296,689,800	271,106,891
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	24	6,579,175	9,066,948
Փոխառություն	26	17,568,114	18,105,978
Թողարկված պարտքային արժեթղթեր	27	28,518,766	25,718,962
Շահութահարկի գծով պարտավորություններ		833,848	
Հետաձգված հարկային պարտավորություն			
Վաճակալության գծով պարտավորություններ	28	2,497,993	2,570,839
Այլ պարտավորություններ	28	2,162,290	1,222,909
Ընդամենը՝ պարտավորություններ		373,588,227	343,588,084
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	29	23,425,448	23,425,447
Էմիսիոն եկամուտ		14,179,227	14,179,227
Պահուստներ		3,248,547	2,768,751
Գլխավոր պահուստ		1,806,425	1,315,598
Վերագնահատման պահուստներ		1,442,122	1,453,153
Զբաղիված շահույթ (վնաս)		4,485,986	9,820,839
Կապիտալի այլ տարրեր			
Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
Փոքրամասնության բաժնեմաս			
Ընդամենը՝ կապիտալ		45,339,208	50,194,264
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		418,927,435	393,782,348

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

ՄԵՍԸՌՊ ՀԱԿՈՒՅԱՆ
ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 04.07.2026թ.



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական արդյունքների մասին

« 30 » ՀՈԲՆԻՍ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան 01.04.26_30.06.26	Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.26_30.06.26	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան 01.04.25_30.06.25	Նախորդ ժամանակաշրջան 01.01.25_30.06.25
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	9,951,609	19,339,505	8,928,622	17,215,270
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(4,717,385)	(9,109,624)	(3,620,937)	(7,176,689)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		5,234,224	10,229,881	5,307,685	10,038,581
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	1,269,031	2,288,918	912,298	2,170,442
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(454,571)	(808,688)	(350,443)	(683,262)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		814,460	1,480,230	561,855	1,487,180
Եկամուտ շահարաժիններից					
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	1,792,900	2,989,997	1,459,517	3,095,714
Այլ գործառնական եկամուտներ	6	238,473	539,180	428,131	630,008
Գործառնական եկամուտներ		8,080,057	15,239,288	7,757,188	15,251,483
Զուտ մասհանութներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	5,278	(168,925)	(951,808)	(913,897)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(2,495,663)	(5,219,163)	(2,114,547)	(4,334,999)
Այլ գործառնական ծախսեր	9	(2,306,495)	(4,385,727)	(2,139,097)	(4,212,453)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10				
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		3,283,177	5,465,473	2,551,736	5,790,134
Շահութահարկի գծով ծախս (փոխատուցում)	11	(591,230)	(983,777)	(465,475)	(1,042,224)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		2,691,947	4,481,696	2,086,261	4,747,910
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	12				
Ժամանակաշրջանի զուտ շահույթ					
Այլ բվում					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի վարչության նախագահ

(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապետ

ՄԵՄԲՐՈՒ ՀԱՎՈՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _ 14.07.2026թ.



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

« 30 » ՀՈՒՆԻՍ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.26_30.06.26	Նախորդ ժամանակաշրջան 01.01.25_30.06.25
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	(7,030)	2,099
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	(6,421)	(26,327)
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	2,421	4,361
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	(11,030)	(19,867)
Համապարփակ ֆինանսական արդյունք	4,470,666	4,728,043
Այդ թվում՝		
Մալի կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

Բանկի վարչության նախագահ

(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ

ՄԵՄՐՈՂ ՀԱՎՈՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2026թ.



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

« 30 » ՀՈՒՆԻՍ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան 30.06.2025	Հաշվետու ժամանակաշրջան 30.06.2026
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		10,547,432	8,871,432
Ստացված տոկոսներ		15,816,431	18,573,912
Վճարված տոկոսներ		(7,106,125)	(9,710,292)
Ստացված կոմիսիոն գումարներ		2,415,118	2,295,567
Վճարված կոմիսիոն գումարներ		(683,262)	(808,688)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		1,193,134	1,393,964
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		3,132,019	2,962,119
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		2,270,713	2,598,921
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(4,290,386)	(5,178,045)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(2,200,210)	(3,256,026)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		(6,154,533)	13,952,935
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(18,439,780)	(24,249,724)
այդ թվում՝			
վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)		(16,394,431)	(24,555,482)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(1,376,115)	5,934
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)		(788,739)	(1,475,644)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		119,505	1,775,468
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		12,285,247	38,202,659
այդ թվում՝			
հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		12,058,503	40,595,338
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		226,744	(2,392,679)
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		4,392,899	22,824,367
Վճարված շահութահարկ		(1,464,306)	(594,882)
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		2,928,593	22,229,485
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		12,868,837	(11,331,667)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)		858,762	(5,188,053)
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(226,082)	(545,430)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(361,777)	(627,545)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում			148,390
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(1,800,988)	950,076
Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		11,338,752	(16,594,229)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահաբաժիններ		(7,777,340)	(9,325,725)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(195,164)	(27,429)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)			(5,720,398)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)			
Բանկի կողմից բողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		702,412	3,268,648
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		3,900,000	
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		1,064,272	(72,846)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		(2,305,820)	(11,877,750)
Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		(2,305,820)	(11,877,750)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,247,877	(1,799,818)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		13,209,402	(8,042,312)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	51,966,052	43,107,570
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	65,175,454	35,065,258



Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ

ՄԵՍԻՐՈՒ ՀԱՎՈՐՅԱՆ

ԳՐՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2026թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 30 » ՀՈՒՆԻՍ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)


Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Զբաղխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	22,425,447	11,279,227	904,203	34,927	1,406,805	8,186,670	44,237,279
Տարվա շահույթ						4,747,910	4,747,910
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							0
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում					(26,327)		(26,327)
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն				2,099			2,099
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխություններ							0
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ				(378)	4739		4,361
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	1,721	(21,588)	4,747,910	4,728,043
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,000,000	2,900,000					3,900,000
Հատկացում պահուստին							0
Շահաբաժիններ բաժնետերերին							0
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	1,000,000	2,900,000	0	0	0	0	3,900,000
Հաշվեկշիռը 2025թ. Հունիսի 30-ի դրությամբ	23,425,447	14,179,227	904,203	36,648	1,385,217	12,934,580	52,865,322

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	23,425,447	14,179,227	1,315,598	56,005	1,397,148	9,820,840	50,194,265
Տարվա շահույթ						4,481,696	4,481,696
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							0
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում					(6,421)		(6,421)
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն				(7,030)			(7,030)
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխություններ							0
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ				1,265	1156		2,421
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	0	0	0	(5,765)	(5,265)	4,481,696	4,470,666
Բաժնետիրական կապիտալի ավելացում							0
Հատկացում պահուստին			490,827			(490,827)	0
Շահաբաժիններ բաժնետերերին						(9,325,725)	(9,325,725)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	0	0	490,827	0	0	(9,816,552)	(9,325,725)
							0
Հաշվեկշիռը 2026թ. Հունիսի 30-ի դրությամբ	23,425,447	14,179,227	1,806,425	50,240	1,391,883	4,485,984	45,339,206

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

ՄԵՍՐՈՂ ՀԱՎՈՐՅԱՆ
ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _ 14.07.2026թ.



Ծանոթագրություններ և բացահայտումներ

Յունիբանկ ԲԲԸ-ում հաշվապահական հաշվառումը վարվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ Հաշվապահական հաշվառման մասին օրենքի, Բանկի կանոնադրության և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հրապարակվող հաշվետվությունները կազմվում են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների: Հաշվետվությունները կազմված են ՀՀՍՍ 9 պահանջներին համապատասխան:

Բանկի հետհաշվեկշռում հաշվառված են պահուստավորման ենթակա հետևյալ հոդվածները.

տրամադրված երաշխավորություններ – 1,082,607 հազ. դրամ

տրամադրված վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասեր – 15,371,268 հազ. դրամ

Յունիբանկ ԲԲԸ աշխատակիցների թվաքանակը կազմում է 988 մարդ, այդ թվում՝ սպասարկող անձնակազմ 15 մարդ:

Ներկայացված Ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ կից ծանոթագրությունները), Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց և Բանկի ղեկավարների, ինչպես նաև Բանկի կողմից տրամադրվող վարկերի, մատուցվող ծառայությունների և սակագների վերաբերյալ տեղեկատվությունը Դուք կարող եք գտնել Յունիբանկ ԲԲԸ տնային էջում:

հասցե՝ www.unibank.am

Իրավական դաշտ

Բանկի հիմնական գործունեությունը

«Յունիբանկ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2001թ. հոկտեմբերի 9-ին և հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 10.10.2001թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N81 արտոնագրային համարով որպես փակ բաժնետիրական ընկերություն և ՀՀ ԿԲ 23.06.2015թ. թիվ 146Ա որոշմամբ վերաձևակերպել է բաց բաժնետիրական ընկերության: Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆինիկական անձանց արտարժույթային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 32 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 19 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր շրջաններում, մեկ մասնաճյուղ Վազախտանի հանրապետության Աստանա քաղաքում, ներկայացուցչություն ՌԴ- Մոսկվա քաղաքում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենցի փող. 12-53:

Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումները ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

Կորպորատիվ Կառավարում

Բանկի նշանակալից թաժնետերերն են

Բաժնետերերի լրիվ անվանումը	Սեփականության ձևը	Բաժնետոմսի տեսակը (սովորական /արտոնյալ)	ռեզիդենտ / ոչ ռեզիդենտ	Փաստացի վճարված մասնաբաժինը	Տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում (%)
Թունիհողինգ ՋիՋի Լիմիթեդ	ՈՉ ՊԵՏԼԻԿԱՆ	սովորական	ոչ ռեզիդենտ	15,553,264	62.4%
Թունիհողինգ ՋիՋի Լիմիթեդ	ՈՉ ՊԵՏԼԻԿԱՆ	արտոնյալ	ոչ ռեզիդենտ	3,201,000	12.8%

Բանկի գործադիր մարմնի աշխատանքի գնահատման սկզբունքները

Բանկի գործադիր մարմնի (Վարչության) աշխատանքների գնահատման հիմք են հանդիսանում Բանկի Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), Գլխավոր հաշվապահի, Ներքին աուդիտի ղեկավարի, ինչպես նաև վարչության այլ անդամների կողմից Բանկի Խորհրդին ներկայացվող եռամսյակային հաշվետվությունները, ՀՀ կենտրոնական բանկի ստուգման ակտերը, արտաքին աուդիտի եզրակացությունը: Վարչության աշխատանքները գնահատվում են նաև ելնելով Վարչության կողմից.

- Վարչության գործունեությունը կանոնակարգող Վարչության կանոնակարգի պահանջների պատշաճ կատարումից,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումից,
- Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքներից,
- Խորհրդի կողմից ընդունված կարգերի, կանոնակարգերի և այլ որոշումների պատշաճ կատարումից,
- ՀՀ բանկային համակարգում բանկի մրցունակությունը բարձր պահելու խնդրի իրագործումից,
- ռիսկերի արդյունավետ կառավարման քաղաքականության իրագործումից,
- վարվող կադրային քաղաքականությունից:
- Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,

Արտաքին աուդիտի վճարները

Յունիբբակ ԲԲԸ արտաքին անկախ ատլիտի ընտրությունը կատարում է հայտարարելով մրցույթ։ Ըստ ՀՀ ԿԲ-ի համապատասխան չափանիշներով ընտրությունը կատարելուց հետո Բանկը կնքում է տվյալ ընկերության հետ պայմանագիր, որտեղ նախատեսված է նաև Բանկի արտաքին ատլիտի առաքելությունը իրականացնող ընկերության վճարի չափը։ Բանկը այդ գումարը տարվա ըմբացքում համամասնորեն ծախսագրում է։

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և մերկայացումը.

«Յունիբբակ» ԲԲԸ-ում հաշվապահական հաշվառումը վարվում և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ)․, Բանկի խորհրդի կողմից հաստատված «Հաշվապահական հաշվառման քաղաքականության» և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն։ Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում Բանկը մշակում է դրանք ինքնուրույն՝ ելնելով նման հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից։

Հաշվապահական հաշվառման խնդիրներն են՝

- տնտեսական գործառնությունների և Բանկի գործունեության արդյունքների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տեղեկատվության ձևավորումը,
- գույքի առկայության և շարժի, մյուսական, աշխատանքային և ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության ապահովումը,
- ֆինանսատնտեսական գործունեության բացասական երևույթների մասին ժամանակին գգուշացումը։

Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

- Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով,
- կրկնակի գրանցման եղանակով՝ ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կիրառման հրահանգին համապատասխան,

- անընդիստ՝ Բանկի գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը։

Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները

Բանկը հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս պահպանում է անընդիսատության, հետևողականության, հաշվեզրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները։

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Բանկում եկամուտների և ծախսերի հաշվառումը տարվում է հաշվեզրման սկզբունքին համապատասխան։ Բանկի թղթակցային հաշիվներից, տեղաբաշխված վարկերից և ավանդներից, պետական կարճաժամկետ պարտատոմսերից, հետգնման համաձայնագրերից և այլ գործարքներից ստացվելիք տոկոսները վերագրվում են եկամուտներին՝ յուրաքանչյուր օր, որոնց հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը կամ այլ փաստաթղթերը։

Բանկի կողմից ներգրավված վարկերի, ժամկետային ավանդների և այլ ժամկետային պարտավորությունների, (հատուկ դեպքերում՝ առանձին պայմանագրերով նաև՝ ցայահանջ ավանդների) գծով վճարվելիք տոկոսները ծախս են ճանաչվում յուրաքանչյուր օր։ Հիմնական միջոցների ամորտիզացիան կատարվում է ամսվա վերջին աշխատանքային օրը։

Ստացվելիք և վճարվելիք վարձավճարները, ատլիտի գծով ծախսերը, և այլ հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը։

Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով կիրառելով գործարքի օրվա արժույթային շուկայի միջին փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսարվի դրությամբ արժույթային շուկայի միջին փոխարժեքը: Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ կամ ծախս:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	30.06.2026	30.06.2025
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	367.89	384.47
ՀՀ դրամ/1 Եվրո	419.47	450.83
ՀՀ դրամ/1 ռուբլի	4.706	4.8983

Հարկում

Շահութահարկը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհամուժները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի : Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ բանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ առևտրային գործառնություններից:

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիրսված ժամկետով վարկերն ու կամխալճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիրսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ։ Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով։ Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայամանգրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում։

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների։

Մեծ Բրիտանիա

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով։

Մեծ Բրիտանիա

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ։ Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին։ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները։ Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո։

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները։ Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին։

Մեծ Բրիտանիա

Ամանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով։ Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով։

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով։ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված շահույթը կամ վնասը վերածևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։ Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։ Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները։

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումը

Մեծ Բրիտանիա

Ֆիրմված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը։ Եթե Բանկի կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի։ Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ համաձ դրանց գծով արժեզրկումից պահուստները։

Մեծ Բրիտանիա

Ուեպո համաձայնագրերով գործառնություններ

Մեծ Բրիտանիա

Հետզմման պայմանով արժեքորերի վաճառքի գործառնությունները (ռեպո) դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործառնություններ: Հետզմման պայմանով վաճառված արժեքորերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեքորերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզմման պայմանագրերով գրավադրված արժեքորեր»։ Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով արժեքորերի գնումը հաշվառվում է պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ հաշիվներում:

Արժեքորերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետզմման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկեր և դեքիտորական պարտքեր

Վարկերը և դեքիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության: Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև, վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, դեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ՝ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների: Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չմայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական ինսցումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեգրկումից կորուստի օրյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն գզալի ֆինանսական ղժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, գուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանակացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա։ Իհնայը սպիթից գնահատումս ռ ախժեգրկանս օրյեկտրլ կելնխասսերը՝ գոյությունը՝ մանատագաս գատատասս արդյուարուն այս ազտրկսերը համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն։ Անհատական գնահատման արդյունքում արժեգրկման օրյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով։ Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեգրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում։

Երբ առկա է վկայություն ամօրտիգացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեգրկման վերաբերյալ, արժեգրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսարդյուքով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն։ Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեգրկման պահուստի միջոցով, արժեգրկումից ծախսը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։ Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեգրկումից ծախս չափելու համար գեղջման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է։ Բանկը կարող է արժեգրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա` օգտագործելով տեսանելի շուկայական գինը։

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հսմած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ։

Արժեգրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ։

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեգրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա։ Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով։ Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ)։ Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար։

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին։ Եթե հաջորդող տարում, գնահատված արժեգրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեգրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեգրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով։ Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին։

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Բանկն փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը։ Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության։ Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց։ Դեկլավորությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն։ Վարկերը շարունակում են մնալ արժեգրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսարդույքը։

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, կապիտալից վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի կատարվում: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Հիմնական միջոցներ

Հիստափան սրժոցների սրահորը, որը ռասապատասխասուս Ե ալտրպր օասաչասս չափասրշսսրսս, սզզսսալսս չափուս Ե ըր սզզսսալսս արժեքով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին ետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած գեղչ և արտոնություն հանվում է գնման գնից:

Հետագա ծախսերը, որոնք վերաբերում են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Մյուս բոլոր հետագա ծախսերը պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրման համար Բանկը սահմանում է հետևյալ նորմերը.

Հիմնական միջոցի անվանումը	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	75	1.67
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Համակարգչային տեխնիկա	5	20
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20
Փոխադրամիջոցներ	7	14.3
Բանկումատներ	10	10
Ոչ նյութական ակտիվներ	20	5
Այլ հիմնական միջոցներ	5	20

Հիմնական միջոցների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:

Վերագնահատումներ

Քաղաքի քարտեզը

Բանկի շենքի, փոխադրամիջոցների, սարքավորումների և այլ հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում՝ Բանկի համապատասխան լիազոր մարմնի որոշմամբ կարող է կատարել դրանց վերագնահատում։ Այն կատարվում է մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների կողմից։ Ընդ որում եթե վերագնահատվում է հիմնական միջոցների միավորը, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի։ Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասին վերագնահատման պահուստում վերացրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին։

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռքբերման արժեքով։ Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից։ Վերջինների որոշման անհնարինություն դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի։

Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը։

Ներգրաված միջոցներ

Քաղաքի քարտեզը

Քաղաքի քարտեզը

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են Կառավարության և Կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, բողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը։ Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում։

Բաժնետիրական կապիտալ

Մովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ։ Նոր բաժնետոմսերի բողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում բողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից։ Երբ բողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար։

Շահույթի բաշխումը

Շահույթից պահուստների ստեղծումը, օգտագործումն ու շահաբաժինների վճարումն իրականացվում է Բանկի կանոնադրության համաձայն։

Կենսաբոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաբոշակային հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հաստուկ կենսաբոշակային հիմնադրամ չի ձևավորվում։ Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են։

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, երե գոյություն ունի օրենսդրոեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաքանությունը

Փոխանակման փոխարժեքը ամեն օր հաստատվում է Բանկի Վարչության նախագահի կողմից, որի առաջարկը ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից ֆինանսական համակարգում տիրող իրավիճակն ուսումնասիրելուց հետո:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

Ակտիվների վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության դեպքում` յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների և ՀՀՀՄ-ների մոտեցման տարբերությունները էական ազդեցություն չեն թողել:

Սույն ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին և բանկի խորհրդի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

Ծանոթագրություն 3. Զուտ տոկոսային և մմանատիպ եկամուտներ

	30.06.26	30.06.25
Տոկոսային և մմանատիպ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	267,228	711,274
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	17,487,038	15,027,433
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	243,087	176,930
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	335,792	168,434
Տոկոսային եկամուտ մինչև մարման ժամկետը պահվող պետական տոկոսային արժեթղթերից	776,809	875,335
Ֆակտորինգից ստացված եկամուտներ		140,000
Տոկոսային եկամուտներ ֆինանսական երաշխավորության պայմանագրերից		
Տոկոսային եկամուտներ ֆինանսական վարձակալությունից	229,548	115,864
Տոկոսային եկամուտներ ածանցյալ ֆինանսական գործիքներից		
Այլ տոկոսային եկամուտներ	3	
Ընդամենը	19,339,505	17,215,270
Տոկոսային և մմանատիպ ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	(341,611)	(309,844)
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	(7,236,935)	(6,075,740)
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	(190,206)	(24,286)
Տոկոսային ծախսեր ածանցյալ գործիքներից		
Տոկոսային ծախսեր կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց	(1,183,845)	(578,711)
Կառավարության վարկեր	(7,672)	(17,229)
Ֆինանսական լիզինգ	(149,355)	(170,879)
Այլ տոկոսային ծախսեր		
Ընդամենը	(9,109,624)	(7,176,689)
Զուտ տոկոսային և մմանատիպ եկամուտ	10,229,881	10,038,581

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

	30.06.26	30.06.25
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Դրամարկղային գործառնություններից	112,127.4	101,332
Հաշվարկային ծառայություններից	1,105,091.8	1,059,295
Երաշխիքներից, հոծարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից,		
հավատարմագրային կառավարման գործառնություններից	12,222.2	6,095
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	642.8	213
Վճարային քարտերի սպասարկումից	854,587.8	739,968
Այլ կոմիսիոն վճարներ	204,245.7	263,538
Ընդամենը	2,288,918	2,170,441
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	(125,062.9)	(120,722)
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	(584,074.6)	(514,626)
Երաշխիքներից, հոծարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից,		
հավատարմագրային կառավարման գործառնություններից		
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	(10,404.3)	(8,076)
Բորսայական և բրոկերային ծառայություններ	(39,899.9)	(17,608)
Այլ կոմիսիոն վճարներ	(49,246.4)	(22,229)
Ընդամենը	(808,688)	(683,262)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	1,480,230	1,487,180

Ծանոթագրություն 5. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	30.06.26	30.06.25
Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Առևտրային նպատակով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ այդ թվում պարտքային արժեթղթերից		
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	2,972,315	3,073,796
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ		
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	17,682	21,918
Ածանցյալ գործիքների վերագնահատումից եկամուտ		
Ներդրումային գործառնություններից զուտ եկամուտ		
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	2,989,997	3,095,714

Ծանոթագրություն 6. Այլ գործառնական եկամուտ

	30.06.26	30.06.25
Այլ գործառնական եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	261,369	441,197
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	91,593	
Հիմնական միջոցների վերազնահատումից ստացված զուտ եկամուտներ		
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝ բաժնետոմսերից, պարտքային արժեթղթերից, ածանցյալներից	44,782	41,962
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերազնահատումից ստացված զուտ եկամուտներ	22	67
Թանկարժեք մետաղների, բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված եկամուտ		
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերազնահատումից ստացված զուտ եկամուտ		36,305
Այլ ֆինանսական կազմակերպությունների մոտ բաժնետասնակցություններից և փայամասնակցություններից ստացված եկամուտ		1,333
Երաշխիքների և երաշխավորությունների գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններից ստացվելիք գումարներ		
Երաշխիքների և երաշխավորությունների գծով ֆինանսական կազմակերպություն հանդիսացող առևտրային կազմակերպություններից ստացվելիք գումարներ	144	
Բռնագանձված գրավների արժեզրկման հակադարձում		
Եկամուտներ վարձակալության տրված ակտիվից		
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերազնահատումից զուտ եկամուտ		103,115
Եկամուտներ պահառության գործունեության գծով		
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ		57,232
Այլ ակտիվների վաճառքից օգուտ		
Այլ եկամուտներ	141,270	14,545
ԸՆԴԱՄԵՆԸ	539,180	695,756

Ծանոթագրություն 7. Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ

		30.06.26	31.12.25
Բանկերի նկատմամբ պահանջների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ակզբնական մնացորդ	14	14,593	74,652
Պահուստին կատարված մասհանումներ		17,506	14,593
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(23,135)	(74,652)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(5,629)	(60,059)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		8,964	14,593

Հաճախորդներին տրված վարկերի, փոխառվածքայինների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ակզբնական մնացորդ	16	6,555,287	6,537,524
Պահուստին կատարված մասհանումներ		2,904,571	11,571,822
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(4,396,649)	(12,355,225)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(1,492,078)	(783,403)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		(2,598,921)	(5,455,668)
Պահուստի օգտագործում		2,432,822	4,654,502
Վերջնական մնացորդը		5,229,308	6,555,287

Մինչև մարման ժամկետը պահվող ՖԱ ՀԿ պահուստի գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ակզբնական մնացորդ	18	72,427	72,427
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		72,427	72,427

Ներդրումների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	18		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ			-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված զումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		-	-
Այլ ակտիվների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ		-	108,159
Պահուստին կատարված մասհանումներ		3,381,022	3,335,384
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(1,714,390)	(3,443,543)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		1,666,632	(108,159)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված զումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		1,666,632	-
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	30	-	7,018
Պահուստին կատարված մասհանումներ		91,670	206,928
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(91,670)	(213,946)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		-	(7,018)
Վերջնական մնացորդը		-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		168,925	(958,639)
Վերջնական մնացորդը		6,977,331	6,642,307

-

Ծանոթագրություն 8. Ընդհանուր վարչական ծախսեր

Ընդհանուր վարչական ծախսեր	30.06.26	30.06.25
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	(5,144,033)	(4,291,584)
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	(12,614)	(16,705)
ծախսեր	(54,806)	(14,841)
Անձնակազմի այլ ծախսեր	(7,710)	(11,869)
ԸՆԴԱՄԵՆԸ	(5,219,163)	(4,334,999)

Ծանոթագրություն 9. Այլ գործառնական ծախսեր

	30.06.26	30.06.25
Այլ գործառնական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Վճարված տուգանքներ և տույժեր	(13,890)	
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	(72,537)	(65,665)
Գովազդի ծախսեր	(534,479)	(497,094)
Ներկայացուցչական ծախսեր	(90,729)	(163,955)
Անդամավճարներ	(37,662)	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(1,189,243)	(1,114,511)
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս		(8,516)
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	(217,471)	(223,163)
Գործուղման ծախսեր	(52,615)	(26,528)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(48,448)	(52,002)
Ապահովագրության ծախսեր	(80,107)	(62,316)
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(298,361)	(459,341)
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	(224,923)	(234,601)
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(144,397)	(66,753)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(263,201)	(221,446)
Տրանսպորտային ծախսեր	(21,708)	(19,547)
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	(434,677)	(589,034)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(64,520)	(52,840)
Համակարգչային ծրագրերի սպասարկում	(23,098)	(24,530)
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր		
Բռնագանձված գրավների արժեզրկումից կորուստներ		
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	(233,574)	
Թանկարժեք մետաղներով գործառնությունների վերագնահատումից զուտ վնաս	(27,877)	
Բարեգործական նվիրատվություններ		
Այլ ակտիվների արժեզրկումից վնաս		
Այլ ծախսեր	(312,210)	(396,359)
Ընդամենը	(4,385,727)	(4,278,201)

Ծանոթագրություն 10. Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս

	30.06.26 Հաշվետու ժամանակաշ րջան	30.06.25 Նախորդ ժամանակաշ րջան
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս		
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս		
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 11. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	30.06.26	31.12.25
Շահութահարկի գծով ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս	833,848	2,431,501
Հետաձգված հարկի գծով ծախս	149,929	(341,045)
Նախորդ տարվա շահութահարկի ճշտում		
ԸՆԴԱՄԵՆԸ	983,777	2,090,456

	Հաշվետու ժամանակաշրջան 30.06.26	Արդյունավետ դրույթաչափ (%)	Նախորդ ժամանա- կաշրջան 31.12.25	Արդյունավետ դրույթաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	5,465,473		11,907,007	
Շահութահարկ դրույթաչափով	983,785	18	2,143,261	18
Չհարկվող եկամուտներ		-		-
Չուտ չեմպագեցվող ծախսեր	(22,906)	(0)	(52,805)	(0)
Այլ հարկվող եկամուտ		-		-
Հարկային դրույթաչափի փոփոխություն				-
Փոխարժեքային տարբերություն	19,715	0		-
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	3,183	0		-
Նախորդ տարվա շահութահարկի ճշտում		-		
Նախորդ տարվա հետաձգված հարկի ճշտում				
Շահութահարկի գծով ծախս	983,777	18.0	2,090,456	18

(0)

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

		Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփա կ ֆինանսական արդյունքում ճանաչված	30.06.2026		
Հազար ՀՀ դրամ	31.12.2025			Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17,406			17,406	17,406	-
Ներդրումներ արժեթղթերում	16,245			16,245	16,245	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	290,340	(146,502)		143,838	143,838	-
Հիմնական միջոցներ	(306,692)			(306,692)	-	(306,692)
Ոչ նյութական ակտիվներ	205,720			205,720	205,720	
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(502,687)			(502,687)	-	(502,687)
Բռնագանձված ակտիվներ	-			-	-	
Այլ ակտիվներ	223,005			223,005	223,005	
Վարձակալության գծով պարտավորություններ	465,081			465,081	465,081	
Այլ պարտավորություններ	76,760	(3,427)		73,333	73,333	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	485,178	(149,929)	-	335,249	1,144,628	(809,379)

Ծանոթագրություն 12. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	30.06.26 Հաշվետու ժամանակաշրջան	30.06.25 Նախորդ ժամանակաշրջան
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ հարկումից հետո	4,481,696	5,790,134
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	191,254,472	182,746,185
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (AMD)	23.43	31.68

Ծանոթագրություն 15. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

	30.06.26	31.12.25
Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կանխիկ դրամական միջոցներ	17,217,259	15,334,334
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	15,137,120	15,913,555
Թղթակցային հաշիվներ	2,710,879	11,859,681
Հաշվեգրված տոկոսներ		
Հնարավոր կորուստների պահուստներ		
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	35,065,258	43,107,570

Ծանոթագրություն 16. Ածանցյալ ֆինանսական ակտիվներ

	30.06.26	31.12.25
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արժույթային սվոպ պայամանագիր		-
Արժույթային ֆորվարդ պայամանագիր		-
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-

Ծանոթագրություն 17. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	30.06.26	31.12.25
Ընթացիկ հաշիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	18,270,742	19,993,112
Դեպոնացված միջոցներ այլ բանկերում	2,379,195	2,508,652
Բանկերում ներդրված ավանդներ	3,111,928	3,267,176
Բանկերին տրամադրված վարկեր	5,780,346	6,020,445
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	131,768	349,694
Ռեպո, սվոպ համաձայնագրեր	9,011,690	
Այլ հաշիվներ	5,844,704	1,716
Հնարավոր կորուստների պահուստներ	(8,962)	(14,592)
ԸՆԴԱՄԵՆԸ	44,521,411	32,126,203

Ծանոթագրություն 18 Ներդրումային արժեթղթեր

	30.06.26	31.12.25
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ Պետական պարտատոմսեր	11,785,448	10,473,188
Կորպորատիվ պարտատոմսեր	5,245,340	3,126,469
Պարտքային կորուստների պահուստ	(72,427)	(62,829)
Ընդամենը	16,958,361	13,536,828

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական պարտատոմսեր	1,843,566	1,099,175
ՀՀ բաժնային գործիքներ		750,325
Ընդամենը	1,843,566	1,849,500
Պարտքային կորուստների պահուստ		-
Ընդամենը ներդրումային արժեթղթեր	18,801,927	15,386,328

Իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պետական տոկոսային արժեթղթեր	-	
Ընդամենը		

Ծանոթագրություն 18. Վաճառքի և հետգնման պայամանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր

	30.06.26	31.12.25
Հետգնման պայամանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական արժեթղթեր	7,623,567	9,290,097
Պարտքային կորուստների պահուստ		(9,598)
Ընդամենը հետգնման պայամանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	7,623,567	9,280,499

Ծանոթագրություն 18.1 Վաճառքի համար մատչելի ֆինասական ակտիվներ

Անձի անվանումը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը (հազ. դրամ)	Տեսակարար կշիռը տվյալ կազմակերպության կանոնադրական կապիտալում(%)	Ընդհանուր ներդրումների մեջ տվյալ կազմակերպության ներդրումների տեսակարար կշիռը (%)
1. ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ ՓԲԸ	26.12.2006	33,657	2.00%	1.67%
2. ԱՔՈԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ ՓԲԸ	30.11.2007	16,500	2.5399%	2.26%
3. ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ	01.12.2023	500,168	2.19%	68.63%
4. ԻՄ ԱՅԴԻ ՓԲԸ	18.03.2024	200,000	7.69%	27.44%
Ընդամենը		750,325		

Ծանոթագրություն 19. Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածքներ

	30.06.26	31.12.25
Տրված վարկեր և այլ փոխառվածքներ ներառյալ տոկոսներ և տույժեր	Հաշվետու Ժամանակաշրջան	Նախորդ Ժամանակաշրջան
Վարկեր	234,774,519	229,480,798
Օվերդրաֆտներ	44,038,318	38,040,187
Ֆակտորինգ, լիզինգ, այլ	11,813,289	3,591,495
Ընդամենը վարկեր	290,626,126	271,112,480
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառվածքների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(6,830,078)	(6,555,289)
Ընդամենը զուտ վարկեր	283,796,048	264,557,191

Տրամադրված վարկերի և փոխառվածքների վերլուծությունն ըստ հաճախորդների	Հաշվետու Ժամանակաշրջան	Նախորդ Ժամանակաշրջան
Պետական ձեռնարկություններ	14,688	3,825
Մասնավոր ձեռնարկություններ,	72,075,881	63,739,172
Ֆինանսական հատված	131,768	352,296
Ֆիզիկական անձինք,	199,443,004	190,065,678
Անհատ ձեռնարկատերեր	19,092,553	18,218,079
Ընդամենը վարկեր	290,757,894	272,379,050
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառվածքների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(6,895,940)	(6,555,289)
Ընդամենը զուտ վարկեր	283,861,954	265,823,761

Տրամադրված վարկերի և փոխառվածքների վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների	Հաշվետու Ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը	Նախորդ Ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը
Արդյունաբերություն	12,859,744	4.42	15,708,500	5.77
Գյուղատնտեսություն	2,699,105	0.93	2,915,838	1.07
Շինարարություն	17,720,561	6.09	19,573,231	7.19
Տրանսպորտ և կապ	1,447,647	0.50	1,138,690	0.42
Առևտուր	11,982,747	4.12	11,087,000	4.07
Սպասարկման ոլորտ	3,646,653	1.25	3,258,136	1.20
Ֆինանսական հատված	512,522	0.18	596,195	0.22
Սպառողական	100,886,707	34.70	103,531,646	38.01
Հիփոթեքային վարկեր	95,842,266	32.96	86,302,072	31.68
Այլ ճյուղեր	43,159,942	14.84	28,267,742	10.38
Ընդամենը	290,757,894	100.0	272,379,050	100.00

Ծանոթագրություն 20. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Ընմբեր	Համակարգիչն ը և կապի միջոցներ	Փոխադրա- միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմնական միջոցների գծով կապիտալ մերդրումներ	Կարծալված հիմնական միջոցների գծով կապիտալ մերդրումներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	5272822	2592638	481926	5642460		895659	14895505
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում 31.12.2025	80991	92813	1076	530836		73663	779378
Ավելացում		46668		388726		5956	441350
Օտարում							
Վերագնահատում	5353813	2638783	483002	5784569		963366	15223533
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30.06.2026							
Կուտակված մաշվածություն	836062	1486206	126960	3421991		86052	5957271
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում 31.12.2025	70320	81376	10363	251924		7155	421138
Ավելացում		30676		252361		3950	286987
Օտարում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	906382	1536906	137323	3421553		89257	6091422
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30.06.2026							
Ջուտ հաշվեկշռային արժեք	4447431	1101877	345679	2363016		874109	9132111
հաշվետու ժամանակաշրջանի վերջում	4436760	1106432	354966	2220469		809607	8928234
նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում							

Ծանոթագրություն 21. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում 31.12.25	6,448,038	1,318,068	101,021	7,867,127
Ավելացում	409,931	57,646		467,578
Օտարում				
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30.06.26	6,857,969	1,375,714	101,021	8,334,705
Կուտակված մաշվածություն				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում 31.12.25	1,919,987	982,323	91,295	2,993,605
Ավելացում	284,762	32,041	1,556	318,359
Օտարում				
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30.06.26	2,204,749	1,014,364	92,851	3,311,964
Ջուտ հաշվեկշռային արժեք				
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	4,653,221	361,351	8,170	5,022,741
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	4,528,051	335,745	9,726	4,873,522

Ծանոթագրություն 22. Բռնագանձված ակտիվներ

	30.06.26	31.12.25
Բռնագանձված ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Բռնագանձված գրավ և վաճառքի համար պահվող ակտիվներ	1,508,717	1,592,107
Ընդամենը	1,508,717	1,592,107

Ծանոթագրություն 23. Այլ ակտիվներ

	30.06.26	31.12.25
Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ստացվելիք գումարներ	778,498	3,975,218
Բանկերից ստացվելիք այլ գումարներ		(89,052)
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)		
Ղեբիտորական պարտքեր և կանխավճարներ	778,498	3,886,166
Խառնվարտից ստացվելիք բանկային ստանդարտացված ծուլակտորներ	239,125	267,002
Կանխավճարներ մատակարարներին և այլ ղեբիտորներ	2,796,979	1,737,088
Կանխավճարներ/գերավճար/ բյուջեի և այլ հարկերի գծով	76,332	107,347
Արագամաշ առարկաներ	589,631	282,059
Այլ ակտիվներ	2,405,595	1,276,878
Ընդամենը ղեբիտորական պարտքեր և կանխավճարներ	6,107,662	3,670,374
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(65,862)	
Ընդամենը այլ ակտիվներ	6,820,298	7,556,540
Հետաձգված հարկային ակտիվներ	335,248	485,177
Կանխավճար շահութահարկի գծով	1,100,153	1,035,590
Ընդամենը	1,435,401	1,520,767

Ծանոթագրություն 24. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	30.06.26	31.12.25
Ընթացիկ հաշիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ այլ	9,044,611	11,437,290
ԸՆԴԱՄԵՆԸ	9,044,611	11,437,290

Ֆինանսական կազմակերպություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հաշիվներ	1,577,904	2,184,771
Վարկեր և ավանդներ, փոխառություններ	8,110,926	2,173,496
ԸՆԴԱՄԵՆԸ	9,688,830	4,358,267

Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	4,800	
ԸՆԴԱՄԵՆԸ	4,800	-

Ընդամենը պահանջներ բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18,738,241	15,795,557
---	-------------------	-------------------

Միջբանկային վարկեր և ավանդներ, փոխառություններ, այլ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ստորադաս փոխառություն ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ կենտրոնական բանկ ռեպո (հետգնման) պայմանագրեր ՀՀ բանկեր վարկեր և ավանդներ, ՀՀ բանկեր ռեպո (հետգնման) պայմանագրեր այլ	6579175	9,066,948
ԸՆԴԱՄԵՆԸ	6,579,175	9,066,948

Ծանոթագրություն 25. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	30.06.26	31.12.25
իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ		
Ընթացիկ հաշիվներ	61,767,721	60,872,475
Ժամկետային ավանդներ	41,022,479	25,884,995
ԸՆԴԱՄԵՆԸ	102,790,200	86,757,470
Ֆիզիկական անձանց նկատմամբ		
Ընթացիկ հաշիվներ	80,272,235	69,101,412
Ժամկետային ավանդներ	113,627,365	115,248,009
ԸՆԴԱՄԵՆԸ	193,899,600	184,349,421
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	296,689,800	271,106,891

Ծանոթագրություն 26. Փոխառություններ

	30.06.26	31.12.25
